



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Բնասիրությանը զբաղվելը և նոր բոյսերի տեսակներ հայտնաբերելը Ռոբերտ Բրոունի համար եղել են նրա կյանքի և գիտական գործունեության իմաստը: 1801 թ Անգլիայից հասնելով Ավստրալիա՝ միայն առաջին երեք շաբաթվա ընթացքում նա հավաքեց 500-ից ավելի բոյսերի տեսակներ, որոնք գրեթե բոլորը գիտական հայտնագործություններ էին: Նա հայտնագործեց ծաղիկների սերմերի շարժումը հեղուկներում: Մանրադիտակով դիտելով ջրում լողացող գեղնամուշկի սերմերը, նա նկատեց, որ դրանք շարժվում են միանգամայն քառասյուրեն: Փոքրագույն մասնիկներն իրենց պահում էին կենդանի էակների նման: Նրանց շարժումն արագանում էր ջրի ջերմաստիճանի բարձրացման հետ և էսպես դանդաղում էր, երբ ջուրը փոխարինվում էր որևէ այլ մածուցիկ հեղուկով: Այս գարնանալի երևույթը երբեք չէր դադարում այն կարելի էր դիտել որքան ասես երկար ժամանակ: Սկզբում Բրոունն իրոք մտածեց, որ մանրադիտակի տակ կենդանի էակներ են: Սակայն շուրջով պարզեց, որ այդպես են իրենց պահում նաև հեղուկում լողացող այլ անկենդան մասնիկներ: Հետագայում այդ շարժումը կոչվեց բրոունյան և փրվեց նրա գիտական բացատրությունը: Ինչպես գիտեք, այն պայմանավորված է հեղուկի մոլեկուլների անկանոն շարժմամբ, որոնք պայտահականորեն հարվածելով հեղուկում կախված մասնիկներին, նրանց են հաղորդում իրենց էներգիան և դնում քառասյին շարժման մեջ: